

Այս անուններն անշուշտ գաղութի մի փոքր մասն են միայն ներկայացնում: Բացի դրանից, Պատմութեանս ընթացքում մենք կը տանք ուրիշ անուններ եւս:

Հայոց գործունէութիւնն եւ նոյն իսկ գործութիւնը գաղարում են երբ սկսում են ԺԷ. դարի վերջն եւ ԺԹ. դարի սկիզբը՝ Նապոլեոնի նեան ըրջանի պատերազմները: Գրանսական բանակը գրաւում է Ամստերդամն եւ ապա ամբողջ Հոլլանդան միացնում Գաղղիային: Ամստերդամ այդպիսով կորցնում է բոլորովին իր նաւագնացութիւնն եւ իր առեւտրական կենտրոնի գերը: Պատերազմի երկար տերողութիւններն եւ կեանքի ու ինչքի ընդհանուր վտանգը բոլորովին կզզիացնում են Ամստերդամը: Այլ եւս ոչ մի նաւ չէր մտնում ներս. Նաւահանգիստն ամցել էր եւ քաղաքը մկսել էր գատարկուել: Նոյն իսկ տեքաղաքը մկսել էր համարկուել: Նոյն իսկ տեքաղաքի հոլլանդացիք հեռանում էին: Այդ վիճակը ամէնից աւելի վասանց հայ գաղութիւն, որի գործութիւնը հիմնուած էր բացառապէս քաղաքի նաւագնացութեան եւ առեւտրի վրայ: Գործերի դադարման, յարաբերութիւնների անջատման դադարման, յարաբերութիւնների անջատման պատճառով, Հայերը հետզհետէ հեռացան Ամստերդամից եւ ցրուեցան զանազան տեղեր, գաղութը վերջացաւ: Երբ Հոլլանդան իր անկազմութիւնը վերստին գտաւ եւ քաղաքն իր գործունէութիւնը վերսկսեց, այլ եւս հայ համայնք չկար: Հիները հեռացած էին, իսկ նորեր այլ եւս չեկան: Այսպէս 1826 ին ընդամենը միայն 3 հայ չեկան: Այսպէս Սկանդինավարակութեան (Stephan di Gabriele): Ի՞նչ եղան Մասէհեան Սկանդինավարակութեան (Stephan di Gabriele): Օնդէ Կերկ (Զին Եկեղեցի) անունով, որի գերեզմանատան մէջ մնում են իրեւ անցեալի յիշազակ մի քանի հայ տապաններ, որոնց մէջ շատակ մի քանի հայ տապաններ, որոնց մէջ շանգչում են այս երբեմնեայ նշանաւոր գաղութի մասցորդները . . .:

Ամստերդամից ըստենաւով կէս ժամ հեռու, Ամստէլ գետի վրայ կայ մի փոքր քաղաք՝ Oude Kerk (Զին Եկեղեցի) անունով, որի գերեզմանատան մէջ մնում են իրեւ անցեալի յիշազակ մի քանի հայ տապաններ, որոնց մէջ շատակ մի քանի հայ տապաններ, որոնց մէջ շանգչում են այս երբեմնեայ նշանաւոր գաղութի մասցորդները . . .:

Իսկ բուն երկրացիք, Հոլլանդացիք ի՞նչ հայեացք ունին այս հայ գաղութի մասին, որ 2 դար ապրել է իրենց մէջ եւ քաղաքական անշաղ պարագաների բերմամբ ստիպուած է յաջող պարագաների բերմամբ ստիպուած է եղել թողնել ու հեռանալ: Անանուն բայց շատ իրազեկ մի յօդուածագիր, Ամստերդամի կարե-

ւոր մի շաբաթաթերթում պատմում է հայոց գործունէութիւնը՝ Հայ եկեղեցին եւ համայնքը (Ամստերդամում) վերնագրով գրուածքում եւ այս գատողութիւնն է անում:

“Հայ համայնքի պատմութիւնը մի ոսկեայ էջ է Ամստերդամ քաղաքի գրքում¹:

(Շարուհակելի:)

ՍԱՐՈՒԽԱՅԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԵՐԵԽՈՍԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ՄԱՍԻՆ

(Շարուհակութիւն:)

թ.

29. — Այս տեղ ստիպուած ենք փակել մեր խորհրդածութիւնները հայ գիտական լեզուի արդի վիճակին մասին, ի հարկէ միայն այն ճիշդերուն՝ որոնք հոս զմեզ կը շահագրգուէին: Ալ կը կնենք (Հմատ. § 2) մենք նպատակ չունէինք քննադատել ոչ այս եւ ոչ այն երկը, զրոնք ի նկատի առինք եւ որոնք յիշուեցուն այս կամ այն տեսակիտուն: Ընդարձակ երկերով ալ, — առանց յիշելու ուրիշները, — տեսանք թէ որչափ խառնակ է տակաւին մեր լեզուին վիճակը, եւ թէ որչափ հեռու ենք վիրշնական եւ ամէնէն ընդունուած ձեւէն, որուն հասնելու է օր մը գիտական հայ լեզուն ալ: Այս էր զլաւուր նպատակը մեր քննադատութեանց ու խորհրդածութեանց: Երբ զարգացման պէտք եղած աստիճանին հասնին օր մը պետական հաստատութիւնները՝ գիտական ամէն ճիշդերով ու իրենց աշխատանոցներով, երբ զարգանայ մեծ ճարտարարուեստ մը, եւ երբ ասոնք ի հարկէ ոչ թէ քանակի ու ծաւալի, բայց կատարելութեան կողմանէ մըցիլ կարենան եւրոպական գիտութեան եւ ճարտարարուեստի հետ, այն ատեն միայն մեր գիտական լեզուն կրնայ իւր վերջին միաձեւ կատարելութեան հասնիլ: Թէ երբ պիտի գայ այս օրը՝ չենք գիտեր: Գիրախտաբար մեր հայրենեաց անապատացմամբ, հայ յեղի անճիտման փորձէն ետքը մնացորդներուն

¹ De Amsterdamer շաբաթաթերթ, 14 Օգոստոս 1887:

իսկ վայրավատին ցրուելով, մեր մերձաւոր ապագան մայլ է նաեւ գրականութեան եւ լեզուի զարդացման տեսակիտով, — յուսանք միայն կարծի մանակի համար Ունինք անդին ի հարկէ ստուար հայութիւն մը Հայաստանի եւ յարակից երկիրներուն մէջ: Բայց այն տեղ — ի կովկաս, — գոնէ մինչեւ այժմ լեզուի տեսակիտով բոլորովին տարբեր ընթացքի մը հետեւած են: Սակայն մենք այս ամէնն անցաւոր երեւոյթ կը նկատենք: Խնչպէս հոն ունեցանք — հակառակ յիշեալ ուղղութեան — մաքուր հայերէնով մեծ գրականութիւն մը, նոյնպէս ապագային կը սպասենք հայ լեզուի մեծագոյն զարդացման՝ նոյն իսկ Գետութեան մը եւ պետական լեզուի գոյութեամբ, որչափ ալ սահմանափակ ըլլայ այն, եւ որչափ ալ միջոց մը փորձեր ըլլան ուրիշ ուղղութեամբ, նաեւ տարօրինակ ուղղագրութեամբ եւ նմաններով: Հայ լեզուն պիտի յաղթէ ի վերջը այս խոչնզոտներուն:

* * *

Յընթացս գրութեանս ստոցանք այլ եւ այլ նամակներ, որոնք կը թելադրէին մեզի գիտութեանց ուրիշ ճիշերու եղներ ալ նկատի առնել: Թէպէտ եւ այս ամէնը մեր սահմանափակ ծրագրէն գուրս կը մնար, սակայն քանի որ մտադիր էինք քննադատել հայ պետական հրատարակութիւնները լեզուական տեսակիտով՝ ասով կատարած կը լուսադարձ մասամբ արտայայտուած բաղդանքները: Դժբախտաբար ստիպուած ենք հրաժարիլ ծրագրուած ընդարձակ այս քննադատութենէն, եւ կը շատանանք միայն քանի մը գիտողութիւններով: Մեր առջեւ ունինք պետական հրատարակութեան բաղմանթիւ երկեր, որոնք լոյս տեսած են Երեւանի համալսարանի ուսուցիչներու աշխատութեամբ իբր դաստիքը այլ եւ այլ ծաւալով ձեռնարկներ: Նախ զարմանքով կը դիմենք որ այս ամէնը — բացի նոր ուղղագրութենէ, որով նաեւ ամենալանտիր գործեր Հայաստանի սահմաններէն գուրս՝ կը մնան անմատչելի հասարակութեան — հրատարակուած են ոչ թէ բուն տպագրութեամբ, այլ աւելի կամ նուազ յաջող վիմագրութեամբ եւ այլ եւ այլ խմբատպութիւններով. տարօրինակ է այս մանաւանդ այն երկերու մասին, որոնք սերունդերու համար կը հրատարակուին եւ որոնց կրկին տպագրութիւնը գժբախտաբար շատ ցանցաւ կը դիմի: այսպէս օրինակի համար Երեւանի համալսարանին թիւ 10¹ ապակէտիպով կը կրէ Աճառեանի տարիներու աշխատութեան արդինք ստուար երկը՝ “Հայերէն արմատական բառարան”², որ ինչպէս պատիւ կը

բերէ հեղինակին, նոյնպէս պատուաբեր կը նար ըլլալ եւ հրատարակութեան: Աւելի հասկանալի էր, երբ ձեռնարկ մը կը հրատարակուի իբր առժամանակեայ աձեռագրի իրաւունքովն, այսինքն երբ կը պարունակէ հեղինակի մը կարդացած դասախոսութիւնները, որոնք վերջնական հրատարակութեան է յառաջ կը կարութին դեռ կոկուելու: Այսպէս աձեռագրի իրաւունքովն հրատարակուած է Տէր. Պօղոսեանի ընդհանուր կենդաբանութեան Ա. պարակր. Քջաբանութիւն¹: Անցողակի նկատենք որ այս երկը լեզուի տեսակիտով լաւագոյններէն է: Բաց աստի բաղմանութիւն մը ուրիշ երկեր, թարգմանութիւնները միայն եւրոպական հեղինակներու գործերէն, եւ այն գժբախտաբար ինչպէս յայտնի կ'երեւայ, ոչ ուղղակի հեղինակներու գործերէն, այլ միջնորդութեամբ ուսուերէն թարգմանութեանց, այսպէս Դ. Յակովջանեանի թարգմանութիւնը Պրոֆ. Մեշչերսկիյ, Տեսական մեքանիկ²: Այսպիսի երկերու մէջ բնականապէս լեզուի տեսակիտով փոքր բառամթերքի մը պէտք կայ եւ սակայն յիշեալ այս երկը շատ աւելի նուազ գոհացցիչ է լեզուի տեսակիտով. տասնեակ տարիներ յառաջ հրատարակուած նման երկեր լաւագոյն բառամթերքը մը կը բովանդակեն: Լեզուի տեսակիտով աւելի լայն քննադատութեան առիթ պիտի տար մեզի նոյն հեղինակի թարգմանած “Փիղիկի հիմունքները”³: Մենք առիթ ունեցանք Յակովջանեանի ամբողջ թարգմանութիւնը համեմատելու գերմաններէն բնագրին հետ⁴, որ իր նորագոյն հրատարակութեամբ շատ մեծ տարբերութիւններ կը ներկայացընէ ուսուական այն բնագրէն, որմէ թարգմանուած է: Այս տեղ կը վեռան այնպիսի օտարաբանութիւններ, որոնք լիովին աւելորդ էին, քանի որ կէս գար եւ շատ աւելի յառաջ արդէն այս օտարաբանութիւններուն բուն իսկական հայերէնները ծանօթ էին եւ գործածական: Բերենք քանի մը օրինակ յիշեալ օտարաբանութիւններէն Էլլուունէ, Ալիոր, Ֆևալուսֆէա, Թագնու սրագիստուն, աւելուտուր, բարութոր, ֆորմաւլ, պարաբուլ, էներցիմ, ցենորոգիստ, ամպլիուուր, աւտոուցած, սուռու-

տական բառարան: Գրեց Հ. Աթոռեան, Երեւան, Համալսարանի Ապակէտակ No. 10 (1926): Armenianisches ethymologisches Wurzelwörterbuch von H. Adjarian, Ա. Եւլարաց

¹ Աւելորդ Տեր-Աւազուցան, ընդհանուր կենդանաբանություն, պրակ Ա. Քջաբանություն եւ հարակից երկիրներ, 53 նկարով, պետական հրատարակութիւն No. 61 Երեւան 1923, էջը IV + 136:

² Պրոֆ. Մեշչերսկիյ, Տեսական մեքանիկ, Մասն Ա. Երեւան 1923, էջը 136:

³ Հրատարակութիւն Հայաստանի Խ. Ա. Համալսարան 1923, էջը 368:

⁴ Grundriss der Physik, von Dr. W. Guttmann, 13. bis 16. Auflage, Leipzig 1918:

¹ Հրատարակութիւն Հայաստանի Խ. Ա. Համալսարան 1923, էջը 136:

կան, հասարակագիտական առարկաները. ուսումը
կը տուժէ, եթի չկայ միօրինակութիւն։ Աշակեր-
տութիւնը տեղափոխուելով դպրոցից դպրոց, ընկ-
նում է սոսկալի շփոթութեան մէջ. որովհետեւ
ուսուցիչներից ամէն մէկը ըստ իր հասկացողութեան
է մօտեցել այս կամ այն տերմինի հայացման
եւ այդպէս էլ սովորեցրել իր աշակերտներին։
Որովհետեւ կոնկրետ գիտութիւնների բոլոր տեր-
միններն ունեն իրենց ուրույն նշանակութիւնը եւ
նրանց բառացի թարգմանութիւնները շատ յաճախ
հակառակ հասկացողութիւն են տալիս եւ շփո-
թեցնում աշակերտին, ուստի անհրաժեշտ է լուրջ
ուշադրութիւն դարձնել այս խնդրի վրայի Մեր
գիտական դասագլքերի բացակայութեան գլւանոր
պատճառներից մէկն է հենց այդ պէտք է համա-
րել, որովհետեւ կամզետենդ յանձնախմբերի կողմց
մասնագիտորէն հիմնավորված գիտական տերմին-
ներ չլինելու պատճառով, շատ անդամ մեր մաս-
նագէտ ուսուցիչները վարանում են այդպիսի պա-
տասխանատու գործի անցնել։ Մեր կարծիքով
արդէն աւելի քան ժամանակն է, որ մեր լուսադող-
կոմատը միջոցներ ձեռք առնի մի գիտական եւ լեզ-
վաբանական յանձնաժողով կազմելու համար, որի
նպատակը պէտք է լինի գիտական տերմինների մի-
բառարան կազմել, որից յետոյ, ես հաւատացած
եմ, որ շատ շուտով մենք կ'ունենանք պէտք եղած
բոլոր դասագլքերը»:

Այս գրութեան մէջ իրաւացի է առաջին
տեսակէտը թէ գիտական լեզուի մէջ միօրինակու-
թիւն տեղդելու է, բայց տարօրինակ է մեղի այն
կարծիքը թէ հայ լեզուն գիտական եզրներու
(առերմիններուն) կողմանէ այնքան ազքատ լլայ,

որ կարելի չըլլայ մինչեւ անդամ ստորին աստիճանի
եւ միջնակարգ գպրոցներու համար պարզ գասա-
գըրեր յօրինել եւ վարանում պատճառէ մասնա-
գէտնիշուն այսպիսի պատտասխանատու գործի
անցնելուն: Մեր գիտական լեզուն նաեւ բարձրագոյն
գիտութեանց ամէն ձիւղերուն համար պէտք եղած
բառամիջերը ունի, ինչպէս մինչեւ հիմայ յաճա-
խակի առիթ ունեցանք տեսնելու եւ ինչպէս կ'ա-
պացուցանեն այն գիտական երկերը, որոնք լեզուի
տեսակէտով շատ գոհացուցիչ եին: Անշուշտ շատ
լաւ էր այն առաջարկը թէ լաւագոյն կ'ըլլայ գի-
տական տերմինների մի բառարան կազմել եւ սա-
կայն ձիշտ այդ տեղ է գժուարութիւնը: Նման
բառարանի մը կազմութիւնը տարիներու գործ է
եւ բազմակողմանի հմտութիւնն է որ կրնայ գոհա-
ցուցիչ արդիւնք տալ: Եթէ այս բառարանը յօրի-
նող յանձնաժողովը հասկընանք նորահաստատ
գիտութեանց կաճառին պատմագրական մասնա-

Դ. Մկանաբանություն, պետական հրատարակչություն, Երևան 1923, էջը 228:

² Խորհրդային Հպատակն, 1924, թ. 290 (= 1044):

ճիւղը¹, այն ատեն իրը կը յանդի այն կէտին, որ այս յանձնաժողովի կողմանէ հրատարակուի այն պիսի բառարան մը, ինչպիսի է, օրինակի համար, գաղլ. Ակադեմիայի բառարանը՝ գաղլ. լեզուի համար: Այս աշխատանքն սակայն երկարագոյն ժամանակի կը կարօտի եւ է հետեւաբար անդործնական մեզի եւ մեր յաջորդ սերունդին համար: Ներկայիս կարելի է միայն հրատարակել փոքրիկ բառացանկեր գիտութեանց այլ եւ այլ ճիւղերու համար, կարեւորագոյն հարցն է սակայն բառացանկերու ճշգրիտ ու ընտրելագոյն կազմութիւնը, զոր ձեռք բերելու համար անհրաժեշտ է օգտագործել արեւմտահայ ընդարձակ դրականութիւնը, որ դարէ մը ի վեր ստեղծագործած է ընտրելագոյն հայաշունչ բառամթերքը մը զիտութեանց իւրաքանչեւր ճիւղին համար: Առանց արեւմտահայ անցեալ եւ ներկայ դրականութեան մատակարարած բառամթերքին օգտագործման կը կարծենք թէ կարելի չէ որ բարեյաջող ելքի մը յանդին նոր ձեռնարկները մեր գիտական լեզուն զարգացնելու եւ հիմնաւորելու:

(Վերջ)

Հ. Յ. ՑԱՇԵԱՆ



ԲԱՆԱԿԵՐԻ ՕՐԱԳՐԻՑ

(Ծարունակութիւն եւ վերջ:)

Ե.

ԵՐԵՒԱՆԸ ՍԵՅԷԱՍՏԻ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ
ՄԷՋ

Հայ պատմագիրներից երեւանի անունն առաջին անգամ տալիս է Սերէսու է. դարում: Պատմելով արաբացւոց առաջին արշաւանքներից մէկի մասին, որ տեղի է ունենում թէոդորոս Ռշտունու ու Ներսէս Շինողի ժամանակ, նա տալիս է արաբական զօրաշարժի ընդհանուր պատկերն այս խօսքով:

«Եկն զօրն իսմայէլի, եւ բաժանեցան յերիս. առաջ մի յԱլլարատ, առաջ մի ի Սեփհական գնդին կողմանս եւ առաջ մի յԱլլուանն:»²

¹ Որու պաշտօնական կանոնագրութիւնը աես Խորհրդացին Հայաստան, 1925, թ. 26 (= 1079):

² Սեբէսոփ եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլիոն»:

Արաբական բանակը բաժանուում է երեք զօրասիւնի. սրանցից մէկը գնում է Ալլարատ, երրորդն՝ Աղուանից աշխարհն, իսկ երկրորդն՝ «ի Սեփհական գնդին կողմանն», որն, ինչպէս տեսել ենք Վասովուրականն էր:

Ալլարատ ու Աղուանից աշխարհն զնացած «առաջ»ների կամ զօրասիւների մասին Սերէսու իւր ասելիքն աւարտում է հետեւեալ կարծառու հատուածում:

«Իսկ այն զաւըն, որ ի կողմանս Ալլարատնեան, եհար սրով մինչ ի կողմանս Տալոց, Վրաց եւ Աղուանից, առ զաւար եւ զգերութիւն եւ եկն էանց ի Նախաւան առ այն զաւը, որ մարտ եղեալ կուէին ընդ բերդին Նախաւանի, բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա: Առին զբերդն Խամայ եւ սատակէին զնոսս սրով եւ զկանայս եւ զմանկունս զերի վարեցին:»³

Աւելի երկար խօսում է Սերէսուն այն «առաջ»ի կամ զօրասիւնի մասին, որ ուղարկուած էր «ի կողմանս Սեփհական գնդին»: Այսոեղ մանրամասն պատմում է մանաւանդ Արծափի կոխն ու առումը, որ մէջ չենք բերում մեր նիւթի տեսակէտից անկարեւոր լինելու պատճառով: Սակայն չառ հետաքրական է Սերէսուի պատմութեան այն հասուածը, որ պատմում է դէպքերը մինչեւ Արծափի կոխւմը:

«Արդ, որք ի կողմանս Սեփհական գնդին, արշաւեալ սփոեցան եւ հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի՝ առին զաւար եւ զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յերեխիԱն եւ մարտեան ընդ բերդին եւ ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու եւ ոչ նման ինչ կարացին առնել: Գնացին անտի եւ բանակեցան յԱրծափի՝ Հանդէպ բերդին առ ջրովն: Եւ սկսան պատերազմիլ ընդ բերդին:»⁴

Այս հատուածում, որի վրայ մինչեւ այժմ ուշադրութիւն չեն զարծրել բանասէրները, զարմանալի է երեւանի յիշատակութիւնը: Արար զօրքերը զալիս են «ի Սեփհական գնդին կողմանս», եւ այսուղ յանկարծ . . . «ժողովեցան ի յերեւան եւ մարտեան ընդ բերդին . . .» Ո՞րտեղից ո՞րտեղ: Ինչ էլ որ ընդունենք կողմն Սեփհա-

¹ Սեբէսոփ, էջ 191:

² Սեբէսոփ, էջ 188-189: